ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Էդիկ Մինասյան

ԵՐԵՎԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր. վարչաքաղաքական համակարգ, վարչական շրջաններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնք, քաղաքապետներ, Երևանի ավագանի, պատվավոր քաղաքացի, թաղապետ, ընտրական հանձնաժողով, քվեարկություն, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտե:

Անկախության տարիներին էական փոփոխությունների ենթարկվեց մայրաքաղաք Երևանը: Անկախ պետության մայրաքաղաք լինելը նրան օժտեց նոր գործառույթներով: Մայրաքաղաքում կենտրոնացվեցին պետական կառավարման համակարգերը՝ նախագահը, Ազգային ժողովը, կառավարությունը, ինչպես նաև միջազգային կառույցների հայաստանյան գրասենյակները: Երևանում տեղակայվեցին նաև տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցչությունները, հանրապետության վարչական, ֆինանսական և մտավոր ներուժի զգալի մասը:

Խորհրդային շրջանում մայրաքաղաքը ղեկավարում էր ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարը Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահի հետ միասին: ՀՀ անկախության հռչակումից հետո կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարի գործառույթներն անցան աշխատավորների, պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահին: Խորհրդային իշխանության վերջին տարում քաղխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնում եռանդուն և արդյունավետ գործունեություն են ծավալել այնպիսի ճանաչված կազմակերպիչներ, ինչպիսիք են Արտաշես Գեղամյանն ու Համբարձում Գալստյանը:

1991 թ. հունվարի 10-ին քաղաքային խորհրդի առաջին գումարման առաջին նստաշրջանում պատմաբան Հ. Գալստյանն ընտրվեց քաղխորհրդի գործադիր կոմիտեի նախագահ: Նա, ըստ էության, ՀՀ անկախ՝ երրորդ հանրապետության առաջին քաղաքապետն էր: ՀՀ Երրորդ Հանրապետության մայրաքաղաքի երկրորդ քաղաքապետը տնտեսագետ Վահագն Խաչատրյանն էր (22.12.1992-22.02.1996), երրորդ քաղաքապետը՝ շինարար Աշոտ Միրզոյանը (23.02.1996-07.11.1996) չորրորդը՝ գրող, Ղարաբաղ կոմիտեի անդամ, ՀՀ ՆԳ նախկին նախարար Վանո Սիրադեղյանը (14.11.1996-02.02.1998), հինգերորդը՝ կիբեռնետիկ, ինժեներ, գեներալ մայոր Սուրեն Աբրահամյանը (06.05.1998-15.06.1999), վեցերորդը՝ սպորտային մարզիչ, գիտաշխատող, ՀՀ Աժ նախագահի տեղակալ Ալբերտ Բազեյանը (09.08.1999-10.01.2001), յոթերորդը՝ ինժեներ-շինարար, ՀՀ տրանսպորտի և կապի նախկին նախարար Ռոբերտ Նազարյանը (11.01.2001-08,11,2003), ութերորդը՝ ինժեներ-շինարար Երվանդ Զախարյանը (15.11.-2003-04.03.2009), իններորդը՝ տնտեսագետ, սոցիոլոգ Գագիկ Բեգլարյանը (04.03.-2009, 31.05.2009)՝ Երևանի առաջին ընտրված քաղաքապետը (08.12.2010 թ.), տասներորդը՝ կիբեռնետիկ, տնտեսագետ Կարեն Կարապետյանն էր (17.12.2010-28.10.2011), տասնմեկերորդը՝ տնտեսագետ Տարոն Մարգարյանն էր (15.11.2011-09.07.2018), տասներկուերորդը՝ ինժեներ, ռեժիսոր, դերասան Հայկ Մարությանը (23.09.2018-ից):

Սահմանադրության ընդունումից հետո իրականացվեցին պետահիրավական և վարչական մի շարք բարեփոխումներ: 1995 թ. նոյեմբերի 7-ին Ազգային ժողովն ընդունեց «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, որի համաձայն՝ հանրապետության 37 վարչական շրջանների միավորմամբ ստեղծվեցին 10 մարզեր[1]:

[1] Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1995-1999), Գիրք Ա, Ե., 1999, էջ 51-73:

1996 թ. հունիսի 30-ին Ազգային ժողովն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, որին հաջորդեց «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մասին» օրենքը[1]: Հստակորեն չէին տարանջատվում մարզպետների, Երևանի քաղաքապետի ու համայնքապետների միջև իշխանության գործառույթների, տարածքի, գույքի, սեփականության հաստատման խնդիրները:

Տեղական կառավարման համակարգի վերափոխման նպատակը լիազորությունների և պատասխանատվության ոլորտների սահմանազատումն էր մի կողմից պետության՝ ի դեմս կառավարության նշանակած մարզպետների, Երևանի քաղաքապետի, մյուս կողմից՝ տեղական համայնքների միջև՝ ի դեմս նրանց ընտրովի մարմինների ու ղեկավարների: Մարզպետն ու Երևանի քաղաքապետն օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում պետք է իրականացնեին կառավարության տարածքային քաղաքականությունը: Նախագահի հրամանագրով նրանց վերապահվեցին ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, բնության ու շրջակա միջավայրի պահպանության ոլորտները: 1997 թ. մայիսի 6-ին ընդունվեցին ՀՀ նախագահի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» և «Երևան քաղաքում պետական կառավարման մասին»[2] հրամանագրերը: Այս հրամանագրերին նախորդել էին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները հանրապետական, մարզային, քաղաքային և գյուղական համայնքների գույքերի ցանկերը հաստատելու վերաբերյալ[3]:

Ըստ 1995 թ. ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի՝ Երևանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում էր երկրի նախագահը: Տեղական ինքնակառավարումը Երևանում իրականացվում էր թաղային համայնքներում[4]: «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքի համաձայն՝ մարզերի և Երևանի սահմանները նկարագրվում են դրա բաղկացուցիչ մասը կազմող հավելված 1-ում և տեղաբաշխվում 1:200000 մասշտաբի տեղագրական կից քարտեզի վրա: Օրենքում արձանագրվեց, որ Երևան քաղաքի թաղամաս և բնակավայր ընդգրկող համայնքները կոչվում էին թաղային համայնքներ[5]: Երևանի թաղային համայնքի սահմանները որոշվում են դրանց մեջ ընդգրկված բնակավայրերի և թաղամասերի սահմաններով: «Տեղական ինքնակառավարման մասին» 1996 թ. հունիսի 30-ին Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ համայնքներում 3 տարի ժամկետով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար[6]: Օրենքի 56-րդ հոդվածը վերաբերում է Երևանի խորհրդին, ըստ որի՝ նրա կազմի մեջ մտնում են քաղաքապետը և թաղային համայնքների ղեկավարները: Երևանի քաղաքապետը խորհրդի ղեկավարն է: Քաղաքի խորհուրդը քաղաքապետի ներկայացմամբ հաստատում է Երևանի համար օրենքով սահմանված աղբյուրներից ձևավորվոր եկամուտների սահմաններում ծախսերի նախահաշիվը՝ բյուջեն: Երևանի քաղաքապետը Երևանի խորհրդի մեծամասնությամբ՝ 1. անվանում և վերանվանում է Երևանի փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, քաղաքային ենթակայության կրթական, մշակութային և այլ ձեռնարկություններն ու կազմակերպությունները, 2. օրենսդրությանը համապատասխան՝ կանոնակարգում է առևտրի և սպասարկման ոլորտի, ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունե-

---

[1] Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում, քաղաքականության տարբերակներ ու ուղիներ, գիրք 1, Ե., 2004, էջ 423-443:

[2] «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», հ. 11, 20 մայիսի, Ե., 1997, էջ 21-42:

[3] ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, հ. 7-8, հուլիս, օգոստոս, Ե., 1996, էջ 38, 39. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հ. 6, 31 մարտի, Ե., 1997, էջ 78-90:

[4] Տե՛ս ՀՀ սահմանադրություն, հիմնական օրենք, Երևան 1995, էջ 8:

[5] Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, տ.գ.դ., պրոֆ. Է. Հ. Օրդյանի խմբագրությամբ, Երևան 2000, էջ 374:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 349:

ությունը, 3. հաստատում է ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը: Երևանի խորհրդի աշխատակարգը հաստատում է քաղաքապետը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստի ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խորհրդի անդամների կեսից ավելին: Երևանի խորհրդի գործունեությունը կարգավորվում էր սույն օրենքով և նախագահի հրամանագրով (լրաց. 27.12.1997 թ.)[1]:

ՀՀ կառավարության 23.02.1996 թ. «Պատգամավորների շրջանային, Երևանի քաղաքային և Երևանի քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների լուծարման գործընթացն ապահովող միջոցառումների մասին» Ն 78 որոշման համաձայն՝ լուծարվում է նաև Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն և 1996 թ. մարտից իր գործունեությունն է սկսում Երևանի քաղաքապետարանը[2]:

Երևանի քաղաքապետարանը ապահովում է Երևանի քաղաքապետի կողմից ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացումը Երևան քաղաքի տարածքում:

Երևանի քաղաքապետարանն ստեղծման ժամանակ ունեցել է 7 տարածքային բաժիններ՝ Խորհրդային, էրեբունու, Կենտրոնական, Շենգավիթի, Շահումյանի, Մաշտոցի և Արաբկիրի: Նշված տարածքային բաժինները 1997 թ. լուծարվեցին, և ստեղծվեցին 12 թաղային համայնքներ՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն[3]:

ՀՀ կառավարության 1996 թ. մարտի 23-ի որոշմամբ հաստատվեց Երևանի ժամանակավոր, իսկ 1997 թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ՝ հիմնական կանոնադրությունը: Այդ ժամանակահատվածում քաղաքապետարանը ենթարկվել է բազմաթիվ կառուցվածքային փոփոխությունների: ՀՀ վարչապետի՝ 1997 թ. սեպտեմբերի 4-ի Ն 420 որոշմամբ հաստատվեց Երևանի քաղաքապետարանի հետևյալ կառուցվածքը՝ ղեկավարություն, ֆինանսական-տնտեսագիտական, կոմունալ տնտեսության, բարեկարգման և շինարարության, ճարտարապետության, քաղաքաշինության և արտաքին ձևավորման, առողջապահության և սոցիալական պաշտպանության, հողի, գույքի և կադաստրի, կրթության, առևտրի, սպասարկումների և տրանսպորտի վերահսկողության, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի, գործերի կառավարման, ճարտարապետաշինարարական և հողօգտագործման վերահսկորության վարչություններ, արտաքին կապերի, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ծրագրերի լրատվության և հասարակայնության հետ կապերի, նամակների և քաղաքացիների ընդունելության բաժիններ, քաղաքապետի աշխատակազմ[4]: 1998 թ. Կոմունալ տնտեսության, բարեկարգման և շինարարության վարչությունը բաժանվում է 2 մասի՝ Բարեկարգման և Կոմունալ տնտեսության վարչությունների: Առևտրի, սպասարկումների և տրանսպորտի վարչություն նույնպես բաժանվում է 2 մասի՝ Առևտրի և սպասարկումների վարչություն ու Տրանսպորտի վարչություն: Բնության և շրջակա միջավայրի պահպանության բաժինը վերանվանվում է Գյուղատնտեսության, բնության և շրջակա միջավայրի վարչություն: Հաշվապահությունը հանվում է ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից և դառնում առանձին ստորաբաժանում: Վերացվում է ծրագրերի բաժինը:

2000 թ. Առողջապահության և սոցիալական պաշտպանության վարչությունը բաժանվում է 2 մասի՝ Առողջապահության և Սոցիալական ապահովության վարչություններ: Հողի, գույքի և կադաստրի վարչությունը վերանվանվում է Անշարժ գույքի կառավարման վարչություն: Գյուղատնտեսության, բնության և շրջակա միջավայրի պաշտպանության վարչությունը վերանվանվում է Բնապահպանության և գյուղատնտեսութ-

[1] Նույն տեղում, էջ 361:
[2] ՀԱԱ, ֆ. Ե257 g. 1, գ. 339, թ. 1:
[3] Նույն տեղում, թ. 2:
[4] Նույն տեղում, թ. 3:

յան վարչություն: Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը վերանվանվում է Տեղեկատվության վարչություն[1]:

Հետագայում ևս քաղաքապետարանը կրել է բազմաթիվ կառուցվածքային, իսկ կառուցվածքային ստորաբաժանումները՝ անվանական փոփոխություններ[2]:

1996 թ. մարտի 23-ին ընդունված Երևանի քաղաքապետարանի ժամանակավոր կանոնադրության համաձայն ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը Երևանի քաղաքապետն իրականացնում է քաղաքապետարանի միջոցով, որը հաշվետու և պատասխանատու է Երևանի քաղաքապետի առջև: Երևանի քաղաքապետարանն իրավաբանական անձ է, որն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք, բանկային հաշիվ և ձևաթղթեր: Երևանի քաղաքապետարանի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի հաշվին: Երևանի քաղաքապետարանի բաժինները ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, որոնց կառուցվածքն ու կանոնադրությունները հաստատում է Երևանի քաղաքապետը, վավերացնում՝ ՀՀ վարչապետը: Երևանի քաղաքապետարանի բաժինների միջոցով Երևանի քաղաքապետը ղեկավարում է ՀՀ օրենդրությամբ իրեն վերապահված բնագավառների աշխատանքները, համակարգում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Երևանի քաղաքապետարանը պարբերաբար վերլուծում է Երևան քաղաքում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակը, բացահայտում հրատապ լուծում պահանջող հարցերը և այդ մասին նախապատրաստում առաջարկություններ: Երևանի քաղաքապետի որոշումների ու կարգադրությունների նախագծերը, խորհրդակցությունների համար վերլուծական և տեղեկատվական բնույթի նյութեր, իրականցնում է Երևանի քաղաքապետի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը, Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների և ձեռնարկությունների գործունեության ուսումնասիրությունը և այդ մասին առաջարկություններ ներկայացնում Երևանի քաղաքապետին և այլն: Երևանի քաղաքապետի քննարկման հարցերը ներկայացնում են քաղաքապետի տեղակալը, քաղաքապետարանի քարտուղարը և բաժինների ղեկավարները իրենց իրավասության սահմաններում՝ Երևանի քաղաքապետարանի քարտուղարի միջոցով[3]: Այս կանոնադրությանը հաջորդեց ՀՀ նախագահի 1997 թ. մայիսի 6-ի «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» հրամանագիրը, որտեղ քաղաքում պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով որոշվում է Երևանի կառավարումն իրականացնել տարածքային քաղաքականության և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Երևանի տարածքում կառավարության կենսագործվում է Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և քաղաքային ենթակայության կազմակերպությունների ու ձեռնարկությունների միջոցով՝ Երևանի քաղաքապետի ղեկավարությամբ: Երևանի քաղաքապետը համակարգում է ներքին գործերի, ազգային անվտանգության, պաշտպանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ու այլ ոլորտներում Երևան քաղաքում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Նախագահի հրամանագրով Երևանում պետական կառավարումը իրականացվում է պետական, Երևանի քաղաքային ու թաղային համայանքների շահերի ներդաշնակման, ինչպես նաև Երևանի քաղաքապետի և հանրապետական գործադիր մարմինների ու Երևան քաղաքում նրանց տարածքային ծառայությունների համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա: Հրամանագրով ընդլայնվում են Երևանի քաղաքապետի լիազորությունները: Նա օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովում է ՀՀ օրենքների, ՀՀ նախագահի հրամանագրերի կարգադրությունների, կառավարու-

[1] Նույն տեղում, թ. 4:
[2] ՀԱԱ, ֆ. Ե247, ց. 1, գ 7, թ. 39, գ. 307, թ. 27, ց. 5, գ. 4, թ. 8, ց. 7, գ. 503, թ. 6:
[3] ՀՀ կառավարության որոշումների ժողովածու,Ն 3, մարտ, Ե., 1996, էջ 8-9, 10-12:

թյան և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: Նա նաև խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կառավարության նիստերին, առաջարկություններ է ներկայացնում կառավարություն Երևան քաղաքում պետական կառավարման իրականացման համար պետական բյուջեից անհրաժեշտ ամենամյա հատկացումների վերաբերյալ, համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ և նրանց քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերվող՝ Երևան քաղաքին առնչվող հարցերը, ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն իր գործունեության և Երևան քաղաքի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին, օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնում կամ կասեցնում է Երևանի քաղաքային ենթակայության կազմակերպությունների և ձեռնարկությունների ղեկավարների օրենսդրությանը հակասող իրավական ակտերը, միջոցներ է ձեռնարկում Երևանի տարածքում պետական սեփականության պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Քաղաքապետը օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկում է թաղային համայնքների լիազորությունների կատարման ընթացքը, լուծում է Երևանի տարածքում ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր և զանգվածային այլ միջոցառումներ անցկացնելու հարցերը, իր իրավասության շրջանակներում ընդունում որոշումներ և արձակում կարգադրություններ: Ըստ հրամանագրի՝ Երևանի քաղաքապետը չէր կարող լինել համայնքի ավագանու անդամ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի մանկավարժական, գիտական, ստեղծագործական աշխատանքից և զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Երևանի քաղաքապետը քաղաքապետարանի միջոցով իրականացնում է պետական կառավարումը քաղաքում: Նրան վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում է հանրապետության նախագահը: Երևանի քաղաքապետը հաշվետու և պատասխանատու է կառավարության առջև: Հրամանագրով քաղաքապետը ունի երկու տեղակալ, որոնք կարող են իրականացնել քաղաքապետի հանձնարարությամբ այլ լիազորություններ ևս: Նրանց պաշտոնի է նշանակում և ազատում Երևանի քաղաքապետը ՀՀ տարածքային կառավարման նախարարի համաձայնությամբ: Նրանցից մեկը փոխարինում է Երևանի քաղաքապետին նրա բացակայության ժամանակ: Երևանի քաղաքապետարանի քարտուղարը կազմակերպում է քաղաքապետի որոշումների ու կարգադրությունների այլ փաստաթղթերի նախապատրաստումը ու հրապարակումը, քաղաքապետարանի գործավարությունը, քաղաքացիների դիմումների ու գանգատների քննարկումը և այլն: Հրամանագրով Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների իրավական կարգավիճակը սահմանվում է Երևանի քաղաքապետարանի կանոնադրությամբ: Հրամանագրով քաղաքի կառավարման գործում առանձնակի կարևորություն էր տրվում Երևանի խորհրդին, ընդլայվում էր նրա լիազորությունները՝ Երևանի քաղաքապետարանի և թաղային համայնքների ներդաշնակ գործունեությունը համակարգելու, կազմակերպական բազում հարցեր լուծելու ուղղությամբ: Հրամանագրով առանձնացվում էր նաև Երևանի քաղաքապետի գործունեությունը կառավարության տարածքային քաղաքականության բնագավառներում, Երևան քաղաքում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգումը[1]:

ՀՀ կառավարության 1997 թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետարանի կանոնադրությունում առանձին կետով նշվում է քաղաքապետարանի գործունեության կազմակերպումը, որտեղ քաղաքապետարանի կազմակերպչական կառուցվածքում առանձնացվում են քաղաքապետի աշխատակազմը և քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումները, վարչություններն ու նրանց բաժինները:

2002 թ. մայիսի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց ՀՀ Օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», որտեղ տրված է համայնքի բնութագիրը, որպես տեղական ինքնակառավարումն իրականացնող մարմին, որը պետական համակարգի

[1] ՀՀ Պաշտոնական տեղեկագիր, Ն 11, 20 մայիսի 1997, Երևան 1997, էջ 21-31:

ժողովրդավարական հիմքն է: Համայնքը բնակիչների հանրություն և վարչատարածքային միավոր է, որի սահմաններում համայնքի բնակիչներն ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում: Համայնքն իրավաբանական անձ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով, այն ինքնուրույն տնօրինում է իր սեփականությունը, ունի բյուջե, ինչպես նաև ՀՀ կամ համայնքի զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք: Ժողովրդի իշխանություն իրականացնելու համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է: Ըստ օրենքի՝ համայնքի ղեկավարը քաղաքային համայնքում քաղաքապետը, Երևանի թաղային համայնքում՝ թաղապետը, պաշտոնապես ներկայացնում է համայնքը և համայնքի գործադիր մարմինն է: Համայնքի ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել են ավագանու անդամների օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Օրենքը սահմանում է համայնքի ղեկավարի գործունեությունը սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական բոլոր ոլորտներում: Երևանի թաղային համայնքների ավագանիների որոշումների նկատմամբ իրավական վերահսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը: Օրենքի ինններորդ գլխի 82-րդ հոդվածը վերաբերվում է Երևանի խորհրդի կառուցվածքին և լիազորություններին: Օրենքում նշվում է, որ Երևանի խորհրդի կազմում ընդգրկվում են Երևանի քաղաքապետը և թաղային համայքների ղեկավարները: Երևանի քաղաքապետը խորհրդի ղեկավարն է: Երևանի խորհուրդը Երևանի քաղաքապետի ներկայացմամբ հաստատում է Երևան քաղաքի բյուջեն, այն թույլտվությունների կարգը, որոնց համար նախատեսված է տեղական տուրքի գանձում: Երևանի քաղաքապետը Երևանի խորհրդի մեծամասնությամբ անվանում և վերանվանում է Երևանի փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, քաղաքային ենթակայության կրթական, մշակութային և այլ ձեռնարկություններն ու կազմակերպությունները, օրենսդրությանը համապատասխան կանոնակարգում է առևտրի ու սպասարկման ոլորտի ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությունը, հաստատում է ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների Երևանի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու կարգը: Երևանի խորհրդի աշխատակարգը հաստատում է Երևանի քաղաքապետը: Օրենքը սահմանում է, որ Երևանի խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի նիստի ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խորհրդի անդամների կեսից ավելին[1]:

2008 թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որի առաջին բաժնում ներկայացված են քաղաքում տեղական ինքնակառավարումը, տարածքային կառավարումը, տեղական ինքնակառավարման մարմինները, ավագանին, քաղաքապետը, Երևանի բյուջեն, Երևանի զարգացման ծրագրերը, երկրորդ բաժնում՝ Երևանի վարչական շրջանները, վարչական շրջանի ղեկավարները, վարչական հսկորությունը, անցումային եզրափակիչ դրույթները և այլն:

Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ Երևանի ավագանին, Երևանի քաղաքապետը: Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները գործում են իրենց նստավայրում՝ Արգիշտիի փողոց 1 հասցեում: Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների:

Դեռևս 1995 թ. դեկտեմբերին վերացվեցին նախկին շրջանային միավորումները, և ստեղծվեցին վարչական նոր բաժանումներ՝ մարզեր: Մարզի կարգավիճակ տրվեց

[1] ՀՀ Պաշտոնական տեղեկագիր, «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը» Ն 21, 196, 21 հունիսի 2002, էջ 5-6, 10, 43;

նաև Երևանին: 1996 թ. փետրվարի 19-ին ՀՀ կառավարության նիստում նշանակվեցին ՀՀ մարզպետները: Նույն թվականի փետրվարի 23-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվեց նաև Երևանի քաղաքապետը: Նա աշխատեց մինչև նոյեմբեր ամիսը[1]: Հուլիսին Երևանը բաժանվեց 12 թաղային համայնքների, բնակավայրերի և թաղամասերի: Փաստորեն՝ Երևանի 8 շրջանները բաժանվեցին 12 համայնքների: Լենինյան շրջանն ընդգրկում էր ներկայիս Շենգավիթի համայնքի տարածքը, Շահումյանը՝ Մալաթիա-Սեբաստիա և Աջափնյակ համայնքների[2], Մյասնիկյանը՝ Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների, Օրջոնիկիձեի շրջանը՝ էրեբունի և Նուբարաշեն համայնքների, Սպանդարյանը՝ Կենտրոն համայնքի, 26 կոմիսարներինը՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների, Մաշտոցինը՝ Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների, Խորհրդայինը՝ Նոր Նորք, Ավան և Զեյթուն համայնքների տարածքները:

Համայնքների վարչական սահմաններն այբբենական կարգով ունեն հետևյալ տեսքը.

1. Աջափնյակ համայնքն ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Ընդգրկում է Նորաշեն, Վահագնի, Սիլիկյան, Անաստասավան 16-րդ բնակելի զանգվածները: Բնակչության թիվը կազմում է 125.8 հազար մարդ, տարածքը՝ 2568 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած համայնքային ընտրություններում թաղապետ ընտրվեց Թորգոմ Մադոյանը: Նրան հաջորդել են Պարույր Կարապետյանը, Ռաֆիկ Մկրտչյանը, Արծրուն Խաչատրյանը, Ռուբեն Հովսեփյանը, Արտավազդ Սարգսյանը և Գևորգ Բաբայանը:

2. Ավան համայնքն ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Նոր Նորքի, Քանաքեռ-Զեյթուն համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Ընդգրկում է Ավան-Առինջ, Նարեկացի, Հովհաննիսյան, Իսահակյան, Թումանյան բնակելի համալիրները, Աղի հանք և Ավան թաղերը: Բնակչության թիվը կազմում է 504 հազար մարդ, տարածքը՝ 837 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում թաղապետ է ընտրվել Ռուբեն Հայրապետյանը: Նրան հաջորդել են Հարություն Մարգարյանը, Տարոն Մարգարյանը և Մանվել Զավադյանը:

3. Արաբկիր համայնքն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն համայնքների հետ: Բնակչության թիվը կազմում է 150.2 հազար մարդ, տարածքը՝ 1235 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած համայնքային ընտրություններում թաղապետ է ընտրվել Հայկ Հովհաննիսյանը: Նրան հաջորդել են Ֆելիքս Ցայլոյանը, Լևոն Հարությունյանը, Հովհաննես Շահինյանը, Համլետ Մարգարյանը, էդուարդ Մուշեղյանը, Հովհաննես Վարդանյանը և Արամ Դանիելյանը:

4. Դավթաշեն համայնքն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ և Արաբկիր համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Բնակչության թիվը կազմում է 50.5 հազար մարդ, տարածքը՝ 671 հա: 1996 թ. հոկտեմբերին թաղապետ է ընտրվել Ռուբեն Գևորգյանը: Նրան հաջորդել են Սուրեն Ղուկասյանը, Արթուր Գևորգյանը, Ռուսլան Բարդասարյանը և Միքայել Թումասյանը:

5. էրեբունի համայնքն ընդհանուր սահմաններ ունի Կենտրոն, Նորք-Մարաշ, Նոր Նորք, Շենգավիթ, Նուբարաշեն համայնքների հետ: Ընդգրկում է Նոր Բութանիան, Նոր Արեշը, Արգիշտի, էրեբունի բնակելի համալիրները, Սարի թաղը, Մուշավանը և Զրաշենը: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի և Արարատի մարզերին: Բնակչության թիվը կազմում է 126.2 հազար մարդ, տարածքը՝ 4841 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած համայնքային ընտրություններում թաղապետ է ընտրվել Արարատ Խրիմյանը, որին հաջորդել են Միհեր Սեդրակյանը, Արմեն Հարությունյանը, Դավիթ Գևորգյանը և Արման Աբրահամյանը:

6. Կենտրոն համայնքն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Արաբկիր, էրե-

---

[1] Բաղդասարյան Գագիկ և ուրիշ., Ե., 2002, էջ 48:

[2] Նույն տեղում, էջ 61-68:

բունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն համայնքների հետ: Ընդգրկում է Կոնդ, Ջորագյուր ե Այգեստան թաղերը: Բնակչության թիվը կազմում է 179.1 հազար մարդ, տարածքը՝ 1420 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած համայնքային ընտրություններում թաղապետ է ընտրվել Արարատ Զուրաբյանը: Նրան հաջորդել են Գագիկ Բեգլարյանը, Գագիկ Գյանջումյանը, Արա Սադոյանը և Վիկտոր Մնացականյանը:

7. Մալաթիա-Սեբաստիա համայնքն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ համայնքների հետ: Ընդգրկում է Անդրանիկ, Արարատյան զանգված բնակելի համալիրները, Նոր Սեբաստիան, Նոր Մալաթիան, Նոր Կիլիկիան, Հաղթանակ, Սպանդարյան թաղերը: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին: Բնակչության թիվը կազմում է 158.7 հազար մարդ, տարածքը՝ 2580 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Վահան Զատիկյանը: Նրան հաջորդել են Աղվան Գրիգորյանը, Դավիթ Օհանյանը, Արտակ Ալեքսանյանը և Դավիթ Կարապետյանը:

8. Նորք-Մարաշ համայնքն ընդհանուր սահմաններ ունի էրեբունի, Կենտրոն և Նոր Նորք համայնքների հետ: Ընդգրկում է Նորք և Մարաշ թաղերը, բնակչության թիվը կազմում է 14.6 հազար մարդ, տարածքը՝ 460 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Արմենակ Արմենակյանը: Նրան հաջորդել են Վարազդատ Մկրտչյանը և Վաղինակ Մկրտչյանը:

9. Նոր Նորք համայնքն ընդհանուր սահմաններ ունի Ավան, էրեբունի, Կենտրոն, Նորք Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Բնակչության թիվը կազմում է 132.1 հազար մարդ, տարածքը՝ 1447 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Մկրտիչ Սինասյանը: Նրան հաջորդել են Դավիթ Պետրոսյանը, Մելիք Գասպարյանը, Արմեն Ուլիխանյանը և Հայկ Միերյանը:

10. Նուբարաշեն համայնքն ընդհանուր սահմաններ ունի էրեբունի և Շենգավիթ համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին: Բնակչության թիվը կազմում է 9.3 հազար մարդ, տարածքը՝ 1811 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Ռոբերտ Ասատրյանը: Նրան հաջորդել են Միեր Հովհաննիսյանը, Արթուր Կիրակոսյանը և Թելման Թադևոսյանը:

11. Շենգավիթ համայնքն ընդհանուր սահմաններ ունի էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն համայնքների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին: Բնակչության թիվը կազմում է 146.1 հազար մարդ, տարածքը՝ 405 հա: 1996 թ. կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Բագրատ Անդրեասյանը, որին հաջորդել են Մարտին Սարգսյանը, Սարգիս Հովհաննիսյանը և Արմեն Սարգսյանը:

12. Քանաքեռ-Զեյթուն համայնքն ընդհանուր սահմաններ ունի Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք համայնքների հետ: Բնակչության թիվը կազմում է 102.7 հազար մարդ, տարածքը՝ 810 հա: 1996 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում թաղապետ է ընտրվել Ռուբեն Սինոյանը, ում հաջորդել են Արայիկ Քոթանջյանը, Գևորգ Նազարյանը և Արթուր Ստեփանյանը:

1996 թ. հոկտեմբերին կայացան տեղական ինքնակառավարման մարմինների, այդ թվում՝ Երևանի 12 թաղապետների ընտրությունները՝ 3 տարի ժամկետով: Նույն ժամկետով նույն մարմինների ընտրություններ կայացան նաև 1999, 2002 և 2005 թթ., 2008 թվականից՝ 4 տարի, իսկ 2016 թվականից՝ բարեփոխված նոր Սահմանադրությամբ արդեն 5 տարի ժամկետով:

ՀՀ կառավարությունը, հիմնվելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և 2002 թ. մայիսի 7-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների վրա, 2009 թ. փետրվարի 19-ին ընդունեց 148-Ն որոշումը, ըստ որի՝ մայիսի 31-ը նշանակվեց Երևանի ավագանու անդամների ընտրության օր: Ընտրություններին մասնակցեցին «Բարգավաճ Հայաստանը», «Ժողովրդական կուսակցությունը», «Հայ ազ-

գային կոնգրես» դաշինքը, «Հայ հեղափոխական դաշնակցությունը», «Հայաստանի աշխատավորական-սոցիալիստական կուսակցությունը», «Հայաստանի հանրապետական կուսակցությունը» և «Օրինաց երկիր» կուսակցությունը: Ըստ ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների՝ անցողիկ նվազագույն շեմը հաղթահարել էր ՀՀԿ-ն՝ 47,93 %՝ 35 մանդատ, ԲՀԿ-ն՝ 22,71 %՝ 17 մանդատ, ՀԱԿ-ը՝ 17,41 %՝ 13 մանդատ: Շեմը չէին հաղթահարել ՕԵԿ-ը՝ 5,22 %, ՀՅԴ-ն՝ 4,65 %, ԺԿ-ն՝ 2,14 %, ՀԱՍԿ-ը՝ 0,49 %[1]:

Համաձայն վերոնշյալ օրենքի և 2009 թ. մայիսի 7-ի Հ 546-Ն որոշման՝ 2009 թ. հունիս 8-ին՝ ավագանու գումարած առաջին նիստի ժամանակ, ընտրեցին ավագանու անդամների «Հանրապետական կուսակցության» ցուցակի առաջին համարը՝ Գագիկ Բեգլարյանին[2]: Ընտրությունների ընթացքում տարբեր տեղամասերում արձանագրվել էին որոշակի խախտումներ, որոնց հիման վրա ՀԱԿ-ը դիմել էր Երևանի ավագանուն՝ ընտրություններն անվավեր ճանաչելու համար, սակայն ԿԸՀ-ն մերժեց դիմումը ընտրություններն անվավեր ճանաչելու հիմքեր չլինելու պատճառաբանությամբ: 2009 թ. հունիսի 11-ին Երևանի քաղաքապետարանում առաջին անգամ տեղի ունեցավ քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի երդման արարողությունը:[3]

Երդումից հետո Երևանի ավագանու անդամ, մայրաքաղաքի պատվավոր քաղաքացի Մարտին Վարդազարյանը նորընտիր քաղաքապետին հանձնեց խորհրդանշական ոսկեձույլ լանջաշղթան, երգչախմբի կատարմամբ հնչեց մայրաքաղաքի օրհներգը: Նոր քաղաքապետը պաշտոնավարեց մինչև 2010 թ. դեկտեմբերի 8-ը: Նրան հաջորդեց Կարեն Կարապետյանը, ով ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրվել էր Երևանի ավագանու անդամ: 2010 թ. դեկտեմբերի 17-ին Երևան քաղաքի ավագանու կորմից Կ. Կարապետյանն ընտրվեց Երևանի քաղաքապետ[4]: Դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ Երևանի 53-րդ քաղաքապետի երդմնակալության արարողությունն այն նույն ընթացակարգով, ինչն իրականացվել էր նախորդ քաղաքապետի ժամանակ: Նա պաշտոնավարեց մինչև 2011 թ. հոկտեմբերի 28-ը: Նրա հրաժարականից հետո՝ նույն թվականի նոյեմբերի 15-ին, Երևանի ավագանու քվեարկությամբ Երևանի 54-րդ քաղաքապետ ընտրվեց ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրված ավագանու անդամ, փոխքաղաքապետ Տարոն Մարգարյանը[5]:

Երևանի ավագանու հերթական ընտրությունները տեղի ունեցան 2013 թ. մայիսի 5-ին: Ընտրություններին մասնակցեց 7 քաղաքական ուժ՝ «Առաքելություն կուսակցությունը», «Հայաստանի հանրապետական», «Բարգավաճ Հայաստան», «Հայ ազգային կոնգրես» «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Օրինաց երկիր» կուսակցությունները և «Բարև, Երևան» կուսակցությունների դաշինքը[6]:

ՀՀԿ-ն, ըստ ԿԸՀ-ի, ստանալով 255513 ձայն, ձեռք բերեց մայրաքաղաքում քվեարկության մասնակիցների ձայների 55,86 %-ը՝ վաստակելով 42 մանդատ: ՀՀԿ-ին հաջորդեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 17 մանդատ, ձայների քանակով երրորդ տեղը գրավեց «Բարև, Երևան» դաշինքը՝ 6 մանդատ: Անցորիկ անհրաժեշտ ձայները չհավաքեցին քաղաքական մյուս ուժերը՝ «Հայ ազգային կոնգրեսը»՝ 3,9 %, «Հայ հեղափոխական դաշնակցությունը»՝ 3,79 %, «Օրինաց երկիր» կուսակցությունը»՝ 3,73 %, «Առաքելությունը»՝ 0,64 %:

Վերոնշյալ արդյունքների հիման վրա ՀՀԿ համամասնական ցուցակը գլխավորող Տարոն Մարգարյանը վերընտրվեց Երևանի քաղաքապետ: Նույն թվականի հունիսի 12-ին տեղի ունեցավ Տարոն Մարգարյանի երդմնակալության արարողությունը[7]:

---

[1] «Հայաստանի Հանրապետություն», 2 հունիսի, 2009 թ., էջ 1-2:
[2] Նույն տեղում, 9 հունիսի, 2009 թ., էջ 1-2:
[3] Նույն տեղում, 12 հունիսի, 2009 թ., էջ 2:
[4] Նույն տեղում, 17 դեկտեմբերի, 2010 թ., էջ 1-2:
[5] Նույն տեղում, 15 նոյեմբերի, 2011 թ., էջ 2-3:
[6] Նույն տեղում, 14 մայիսի, 2013 թ., էջ 2-3:
[7] Նույն տեղում, 12 հունիսի, 2013 թ., էջ 2-3:

2017 թ. մայիսի 14-ին կայացան Երևանի ավագանու հերթական ընտրությունները: Երևանի քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցեց երեք քաղաքական ուժ՝ «Հայաստանի հանրապետական կուսակցությունը», «Ելք» կուսակցությունների դաշինքը և «Երկիր ծիրանի» կուսակցությունը: Ընտրությունների մասնակիցների ընդհանուր թիվը 842151 էր, քվեարկության մասնակիցների թիվը՝ 345158 կամ 40,99 %-ը: Ըստ ԿԸՀ-ի հրապարակած տվյալների՝ ՀԿԿ-ն ստացել էր 240036 քվե՝ քվեարկությանը մասնակցած ձայների 71,25 %-ը, 46 մանդատ, «Ելք» կուսակցությունների դաշինքը՝ 70731 քվե, 14 մանդատ՝ 21 %-ը, իսկ «Երկիր ծիրանի» կուսակցությունը՝ 26109 քվե, 5 մանդատ՝ 7,75 %-ը[1]: 2017 թ. հունիսի 12-ին Երևանի ավագանու հատուկ նիստում տեղի ունեցավ Տարոն Մարգարյանի երդմնակալության արարողությունը[2]:

Թավշյա հեղափոխության հաղթանակից հետո՝ 2018 թ. հուլիսի 9-ին, Տ. Մարգարյանը դիմեց համաքաղաքացիներին՝ հայտարարելով զբաղեցրած պաշտոնից հրաժարվելու մասին:

2018 թ. հուլիս 12-ին հրավիրվեց Երևանի ավագանու արտահերթ նիստ և քննարկվեց քաղաքապետի արտահերթ ընտրությունների օրը 2018 թ. հուլիսի 16-ին սահմանելու մասին որոշման նախագիծը: Առաջարկ է եղել օգոստոսի 8-ը սահմանելու որպես քաղաքապետի արտահերթ ընտրությունների օր: Երևանի ավագանին ձայների մեծամասնությամբ հավանություն է տվել Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրությունների օրը հուլիսի 16-ին՝ ժամը 11.00-ին սահմանելու մասին նախագծին: Սակայն Երևանի ավագանու հուլիսի 16-ի արտահերթ նիստը չի կայացել քվորումի բացակայության պատճառով. ավագանու 65 անդամներից ներկա է երել միայն 5-ը, ուստի՝ նիստը համարվել է չկայացած: ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 16-ի 899-Ն որոշմամբ կրճատվեց ավագանու լիազորությունների ժամկետը: Երևանի նոր ավագանու արտահերթ ընտրության օր նշանակվեց 2018 թ. սեպտեմբերի 23-ը: Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցելու հայտ էր ներկայացրել 12 քաղաքական ուժ՝ 4 կուսակցությունների դաշինք և 8 կուսակցություն: Կուսակցություններից մեկն ինքնաբացարկ էր հայտարարել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թ. հոկտեմբերի 4-ի արձանագրության հիման վրա քաղաքապետ ընտրվեց Հայկ Մարությանը:

Այսպիսով՝ ՀՀ անկախության շրջանում իրականացված վարչական բարեփոխումները առկա թերություններով հանդերձ ավելի կուռ և ամբողջական դարձրին ինքնակառավարման համակարգը մայրաքաղաքում:

Эдик Минасян, Ереван в административно-политической системе независимой армянской государственности. В данной статье анализируются административно-политические изменения в столице Армении в годы независимости (1991-2018 гг.) На основе соответствующих архивных материалов и периодических изданий представлена роль и значение капитала в марш-политической системе Армении. Особенно важным является изменение статуса Еревана, которое первоначально имеет статус марза (Закон об административно-территориальном подразделении от 7 ноября 1995 года), а затем с марта 1996 года переходит к статусу сообщества.

Происходят также и структурные изменения в городе Ереване. Ереван делится на 7 территориальных округов в 12 районных общинах В комментариях к 2008 году говорится о важности закона «О местном самоуправлении в городе Ереване», принятого 26 декабря в вопросе избрания членов Совета старейшин. Выборы в Совет старейшин и городские советы тщательно анализируются. В 2018 году выявлены недостатки, ошибки, фальсификации в момент выборов. Проведения свободных и демократических выборов в сентябре имеет важное значение в развитии новой столицы Армении.

[1] Նույն տեղում, 16 մայիսի, 2017 թ., էջ 1-2:
[2] Նույն տեղում, 13 հունիսի, 2017 թ., էջ 3:

Ключевые слова: административно-политическая система, административные округа, органы местного самоуправления, общины, мэры, советник Еревана, почетный гражданин, мэр округа, избирательная комиссия, голосование, исполнительный комитет городского совета.

Edik Minasyan, Yerevan in the administrative-political system of the independent statehood of Armenia. The article discusses and analyzes the administrative-political changes in capital Yerevan during the years of independence of the Republic of Armenia (1991-2018) on the basis of appropriate archival materials and periodicals. The role and significance of the capital in the administrative-political system of Armenia is presented. The issues linked to the change of the status of Yerevan are specially highlighted, at the beginning for the status as a province (according to the RA Law on Administrative-Territorial Division as of November 7, 1995), then from March 1996, the transition to community status is shown; structural changes in the city of Yerevan, the transformation of 7 territorial divisions of Yerevan into 12 district communities. The importance of the law "On Local Self-Government in the City of Yerevan", adopted on December 26, 2008, is discussed within the issue of election of the members of the Council of Elders. The elections of the Council of Elders and the mayors are thoroughly analyzed, the flaws, mistakes, falsifications, and the importance of the free and democratic elections of September 2018 in the development of the new capital of Armenia are highlighted.

Key words: administrative-political system, administrative districts, local self-governing bodies, community, mayors, Yerevan Council of Elders, Honorary Citizen, district governor, electoral commission, voting, City Council Executive Committee.